ԳՐՈՀԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԵՆԱԿԵՏԸ ԳՐԱՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ

(Տարբերակ)

Նախորդ հրապարակումը նվիված էր հակառակորդի դասակի հենակետի գրավմանը: Սակայն հարց է առաջանում, իսկ ի՞նչ գործողություններ են անհրաժեշտ նախձեռնել հակառակորդի հենակետը գրավելուց հետո:

- Գրոհային խմբի հրամանատարը կազմակերպում է մարտական գործողությունների վարման շրջանի շարունակական, համակողմանի դիտարկում և հետախուզում (ինչպես օդից, այնպես էլ ցամաքից):

- Զավթող խումբն առաջ է շարժվում զբաղեցրած դիրքերի երկայնքով, զննում և մաքրում է այն հակառակորդից:

- Հակառակորդի հանկարծակի հարձակումը հետ մղելու համար կրակային աջակցության ջոկը առաջ քաշվելով դիրքեր է զբաղեցնում:

- Հրաձիգ բուժակը տարհանում է վիրավորներին և ցուցաբերում է նախաբժշկական օգնություն:

- Զավթող ենթախումբը կատարում է տեղանքի հետախուզում՝ հակառակորդի հնարավոր հակագրոհի ուղղությունները և պաշտպանության հաջորդ գիծը բացահայտելու նպատակով:

- Գրոհային խմբերը հարձակման օբյեկտին տիրանալուց հետո անձնակազմը տեղակայում են ոչ թե հակառակորդի դիրքերում (քանի որ դրանք արդեն նշանափորձված են), այլ տեղանքի այն հատվածներում, որոնք թույլ կտան դիտարկել և հետ մղել հակառակորդի հակագրոհը:

- Գրոհային խմբերը զբաղեցրած շրջանում պատրաստում և սարքավորումն են նոր դիրքեր, որոնք պետք է ապահովեն անձնակազմի պատսպարումը հակառակորդի կրակային ազդեցությունից, ինչպես նաև ուժեղացնեն գրոհային ստորաբաժանումների հնարավորությունները՝ հակառակորդի հակագրոհները հետ մղելու և մարտունակությունը վերականգնելու համար:



Որտեղ՝ ԳԽ՝ գրոհային խումբ:

Աղբյուրը: Спутник разведчика